ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 3-56

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «03» «02» 2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Նունե Մկրտչյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-170-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, «Պետական աջակցություն «ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի կայացում» 2016 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 13900.0 հազար (տասներեք միլիոն ինը հարյուր հազար) դրամ գումար՝ 2.1.2. կետով սահմանված հաշվետվության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2016 թվականի հունվարի 26-ի N 45-Ա հրամանով ստեղծված պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման ոլորտային հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) արձանագրության հիման վրա, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) և ծախսերի նախահաշիվը ներկայացված են սույն պայմանագրի համապատասխանաբար NN 1 և 2 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. կազմակերպությունից պահանջել միջոցառումներն իրականացնել պայմանագրով սահմանված ժամկետներում.

2.1.2. կազմակերպությունից պահանջել միջոցառումների կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 և տեքստային) եռամսյակային և տարեկան հաշվետվություններ (այսուհետ՝ հաշվետվություն), մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը.

2.1.3. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.4. պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5 առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.6 սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2 պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1 կատարել պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.2 իրականացնել պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.3 իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3 կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ.

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները

2.4.7 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2 Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Կազմակերպությանը վճարումներն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում կազմակերպության կողմից ներկայացվող եռամսյակային հայտերի հիման վրա՝ 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները սահմանված կարգով հանձնաժողովի կողմից ընդունման արդյունքներով: Ընդ որում՝ առաջին եռամսյակի և յուրաքանչյուր հաջորդ եռամսյակների առաջին ամսվա գումարների վճարումը կատարվում է կազմակերպության կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ մինչև հանձնաժողովի կողմից ներկայացված հաշվետվությունների սահմանված կարգով ընդունումը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2016 թվականի հունվարի 8-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից և հետևյալ Հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը.
Հավելված N 1 – «ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի կայացում» 2016թ. ծրագրի միջոցառումներ:
Հավելված N 2 – «ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի կայացում» 2016թ. ծրագրի ծախսերի նախահաշիվ:
8.2 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3 Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյանի 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900011010635 ՀՎՀՀ 02505983	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ Հասցե՝ 0051, ք. Երևան, Կոմիտասի 49/2 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ՀՀ 1930044382170100 ՀՎՀՀ 00116673
ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավար՝ ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Կ.Տ.	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ Կ.Տ.

Հավելված N 1

« 03 » « 02 » 2016թ.

N 3-16 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի կայացում» 2016թ. ծրագրի

N	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	**Համառոտ բովանդակությունը**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Վերջնաժամկետը**	**պահանջվող գումարը** (հազ. դրամ)
1	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովման աշխատանքներ	Կանոնադրական խնդիրների իրականացում	Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի բնականոն գործունեություն	2016 թվականի դեկտեմբերի 30	13900.0
Ընդամենը						**13900.0**

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար՝
ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կ.Տ

Կազմակերպություն

«Հավատարմագրման ազգային
մարմին» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Կ.Տ

Հավելված N 2

« 03 » « 02 » 2016թ.

N 3.16 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի կայացում» 2016թ. ծրագրի

հազար դրամ

N	Ծախսերի անվանումը	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
1	Աշխատավարձ	2321,3	5796,3	9271,3	13900,0
ԸՆԴԱՄԵՆԸ		**2321,3**	**5796,3**	**9271,3**	**13900,0**

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար՝
ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

L.S.

Կազմակերպություն

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝
ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

L.S.